ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 779 - Ա

ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշումը՝

1. Շանհայի համագործակցության կազմակերպության կանանց ֆորումին մասնակցելու նպատակով 2024 թվականի սեպտեմբերի 8-14-ը Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն (սեպտեմբերի 8-12-ը՝ Ցինդաո, սեպտեմբերի 12-14-ը՝ Պեկին) գործուղել պատվիրակություն՝ համաձայն հավելվածի:

2. Պատվիրակության անդամների գործուղման ծախսերը, համաձայն փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի, կատարել՝

1) Աննա Հակոբյանի գործուղման ճանապարհածախսը և Պեկին գործուղման գիշերավարձը՝ Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի միջոցների հաշվին.

2) Տաթևիկ Ստեփանյանինը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը հատկացված միջոցների հաշվին.

3) Զոյա Ստեփանյանինը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հատկացված միջոցների հաշվին:

3. Ընդունել ի գիտություն, որ՝

1) Աննա Հակոբյանի, Թալին Թերքմանի և Անահիտ Պարզյանի՝ Ցինդաո գործուղման գիշերավարձի ծախսերը կատարվելու են հրավիրող կողմի միջոցների հաշվին.

2) Թալին Թերքմանի և Անահիտ Պարզյանի գործուղման մյուս ծախսերը կատարվելու են համապատասխանաբար «Իմ քայլը» հիմնադրամի և «Նորք» տեխնոլոգիաների կենտրոնի միջոցների հաշվին:

4. Գործուղվող անձանց՝ օրենսդրությամբ նախատեսված հաշվետվությունները գործուղումից վերադառնալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ և Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

30.08.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ